ԱՆԻ ՓԱՇԱՅԱՆ

ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ ԱՂԱՍԻ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ

Աղասի Այվազյանի արձակը, արդի գրականության բարձր արժեքներից մեկը լինելով, իր մեջ կրում է խոհափիլիսոփայական մտածողություն: Գրողը նորովի է նայում վաղաժամանակ և սովորական դարձած, բայց միևնույն ժամանակ շարժման մեջ գտնվող կյանքի ընթացքին: Հերոսների շարժման ընթացքը հոգեբանական տարածության և ժամանակի մեջ դնելը ստեղծում է մի շատ ինքնատիպ պատում, որի մեջ միաժամանակ կարող են շաղախվել և անցյալը, և՛ ներկան, և թե՛ ապագան:

Այվազյանը ստեղծում է մարդու կյանքի իր պատմությունը՝ ստեղծելով հոգեվիճակային ամենատարբեր տարածություններ, որի մեջ *ապրում էր, ապրում է* և *ապրելու է* մարդը: Նրա ստեղծած հերոսի *ճանապարհը* (կյանքը, նույնիսկ մեկ օրը) մի մեծ վեպ է նրա հոգու, հույզերի ու տառապանքի մասին: Այվազյանի հերոսներն անվերջ հայտնվում են կյանքի մեծ ճանապարհներին, որտեղ տարածությունն ու ժամանակը փոխում և շարժում են վաղուց հաստատվածը:

Եսայի Մակարյանի կյանքը («Աղի կոմսը» վիպակում) սկսվում է ճանապարհներից և ավարտվում է ճանապարհով: Երզրում, Ախալցխա, Սղնախ, Սստրախան...Պետերբուրգ: Այդ ճանապարհ-կյանքը բացում է իր ծյուղերը (ենթաճյուղերը), որտեղ հստակ երևակվում է ճանապարհ-կյանքի կեղևը՝ տառապանքը, կսկիծը, հուշը, տագնապն ու մտորումը: Դա երևում է հեղինակի բազմաթիվ այլ գործերում ևս («Չուկը սափորում», «Չիերին հատկացված ճանապարհը», «Գլուխը հենակների վրա», «Ապագան ետևում» և այլն):

Եթե Եսայի Մակարյանը ստիպված է ընկնում մեծ ճանապարհների «գիրկը», ապա սինյոր Մարտիրոսը կամային ճանապարհորդություն է սկսում Աշխարհի շուրջը («Սինյոր Մարտիրոսի արկածները»): Ճանապարհը նրա համար խորհուրդ է, սիրո իմաստ, ճանաչում, ամեն ինչի սկիզբը. «Վազում էր, որ չմտածի այն մասին, ինչ միշտ հեռվից կանչում էր, ժպտում, գայթակղում, խոստում էր տալիս: Աշխարհներ, նոր երկինքներ, քաղաքներ, մարդիկ, կանայք, տարբեր գույներ»[1]:

[1] Աղ. Այվազյան, Ընտիր երկեր, Եր., 1987, էջ 198:

Տարածաժամանակային տիրույթներում հերոսների ճանապարհները անվերջ իրար են հաջորդում: Մի ամբողջ տոհմի անհանգիստ, հախուռն, խիստ անկանոն շարժում կարելի է անվանել «Նեգրոնք» պատմվածքը, որի հերոսներին ճանապարհները բերում են Լենինական, Թիֆլիս, Ալավերդի, Կիրովական, Սիբիր, Չինաստան, իսկ հետո՝ Իտալիա, Ամերիկա...

Աղ. Այվազյանի տարածաժամանակային գեղագիտության մեջ ինքնատիպ կերպավորում է ստացել *տառապանքը*: Ներաշխարհում տեղ գտած հակադրությունների բազմազանության մեջ գրողը հյուսում է հերոսի տառապանքի ճանապարհը: Պատումն այս դեպքում գտնվում է մշտական հոգեբանական լարվածության մեջ: «Արմինուս» վիպակում գլխավոր հերոսի տառապանքը (թնջուկը) պատկերված է այսպես. «Նրա մարմնում եղած բոլոր անոթները, անցքերը, ծակոտիները, որոնք նրան օդ էին տալիս, հույս էին տալիս, խցանվել էին»[2]:

Տառապանքի մեծ ճանապարհ է անցնում նաև Եսայի Մակարյանը «Աղի կոմսը» վիպակում: Որդուն որոնելու *ճանապարհի-տառապանքը*, որ վիպակի գագաթնակետն է, բացում է հերոսի անցյալն ու ցայտուն գծերով ցույց է տալիս ներկան. «...Նրա ոտքերը դեմ առան պատին ու սեղմում էր ոտքերը պատին, սեղմում էր իր տնքոցն ու մղկտանքը Եսային, աշխարհը տեղը տեղին բերելու իր անկարողությունն ու տառապանքը...»[3]:

Այվազյանի տարածաժամանակային աշխարհայացքի գեղագիտության մեջ կարևոր է նաև *«խորքի», «հատակի»* փիլիսոփայությունը: Գրողի կարծիքով ճշմարիտը ներսն է, և «ներսը», «հատակը» լսելով՝ կարելի է ճանաչել իրական կյանքը, ճշմարտությունը: Այդպես է մտածում, օրինակ, «Ստերեոտիպ» պատմվածքում Վուրկը. «Ոչ, անկրկնելին իր մեջ էր, չէր երևում... Դրսից տեսածն էր ստերեոտիպ... Իր ներսը սիայն իրենն է... Եվ անկրկնելին է միլիոնավոր մարդկանց մեջ»[4]:

Իրերի խորքայնությունը (իմաստը, շարժումը) մարդու հոգու ներսը (բնավորությունը, կամքը, մտածողությունը, խոհը, ճակատագիրը)՝ ահա սա է փնտրում գրողն իրերի բնության մեջ: Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում մի շարք ստեղծագործություններ («Ամեն ինչի առարկան», «Ժամագործների համքարությունը», «Դեկորներ», «Ժանգառք» և այլն):

Վիթխարի նշանակություն ունի գեղարվեստական *ժամանակը* Աղ. Այվազյանի պատումային պոետիկայում: Բազմաթիվ ստեղծագործությունների

---

[2] Նույն տեղում, էջ 115:
[3] Նույն տեղում:
[4] Աղ.Այվազյան. Թթի ամիսը, Եր., 1989, էջ 22:

համատեքստը, անգամ վերնագրերը խոսում են այն մասին, որ գրողի ստեղծագործական հայացքն առաջին հերթին ժամանակին է՝ այն «կենդանի», «անփոփոխ», «անշարժ», «հավիտենական» անեզրությանը, որի մեջ տեղավորված մանրաժամանակները կարող են «տրոհվել», դառնալ «բիծ», «կետ», «գնդիկ», նաև մեծանալ, ահագնանալ՝ անվերջ խորանալով Անցյալի շերտերի ու հիշողությունների բավիղները: «Մարդիկ անընդհատ ցանկացել են վիրահատել ժամանակը, տեղավորել այն իրենց ուղեղի գալարներում, ինչպես տեղավորում են շատ հասկացություններ: Տարբեր ձևերով քրքրել են այդ մեծ հարցականը: Անցյալը, ներկան ու ապագան... Դրանց միջի անիմանալի ժամանակային տարածությունները, նրանց ելումուտը իրար մեջ, նրանց կենտրոնն ու եզրերը»[5]:

Այվազյանի պատումին բնորոշ է անհանգիստ և հսկա շարժումը: Շարժվում են հերոսները ժամանակի ձևվածքներում, իրենց հետ շարժում անցյալում ու ներկայում տեղի ունեցող իրադարձությունները, շարժվում են անգամ աննշան թվացող իրերն ու երևույթները. «Արագ շարժման մեջ նա կարող էր սիրել ինքնամոռաց, կռվել անձնազոհ, մտածել գեղեցիկ...»[6]:

Հետաքրքիր է նաև գրողի կողմից անցյալով ներկայում ապրող հերոսի ժամանակի պատկերումը: Այս դեպքում նա անցյալը մտովի բաժանում է մանրաժամանակների և փորձում վերականգնել այն. «Ես նայում եմ ետ՝ իմ կյանքին, և տեսնում եմ նույնիսկ իմ ապագան՝ ետևում մնացած: Ես անցա ապագան ինչպես փոքրիկ մի կիսակայարան: Ու նայում եմ հիմա իմ ապագային ետևի կողմից»[7]:

Պատմողը կարծես խաղում է ժամանակի հետ («Ապագան ետևում»): Նա ներկայացնում է իր կյանքը, նույնիսկ ապագան՝ ետևում մնացած: Ծեր մարդը ոչինչ է սպասում կյանքից, «վերադառնում է» անցյալ և տխրությամբ նայում «ետևում մնացած Ապագայի խարխուլ շինվածքին»: Նա հիշում է շատ տասնամյակներ առաջ կատարվածը, արժեվորում այն իր համար, նորից վերապրում զգացածը:

Շատ կարևոր է Այվազյանի պատումում նաև հարցադրումը - երբը: *«Երբ»-ը* գերիշխող է դառնում գործողությունների ծալքերում: Հարցական դերանունն այս սոսկ ժամանակ չի խորհրդանշում, այլ շատ ավելի կարևոր բան՝ իրողություն-պատճառ: *Ե՞րբ* (այսինքն՝ ինչի՞ց) սկսվեց սպանության

---

[5] Նույն տեղում:
[6] Աղ. Այվազյան, Ընտիր երկեր, Եր., 1987, էջ 22:
[7] Նույն տեղում, էջ 485:

գաղափարը հերոսի հոգում, *ե՞րբ* սիրեց, *ե՞րբ* սպանեց, *ե՞րբ* խղճաց կնոջը և բացեց աշխարհն իր համար...

«Երբ» - երի առատությունը ծուլվում է պահերի, ավելի մեծ ժամանակների մեջ՝ դառնալով այն ամբողջական գեղարվեստական ժամանակը, որի մեջ գրողը մեծ իմաստ է տեսնում:

«Երբ»-ը հաճախ նույնանում է *Պահին* որպես կենդանի ժամանակի մի շատ կարևոր իրողություն: Դա իրականում ամենակարճ, բայց տարողունակ ժամանակն է, որը միշտ ճակատագրական է դառնում և՛ սյուժեում, և՛ հերոսի կյանքում:

Այդպիսի ճակատագրական *Պահեր* կան Աղ. Այվազյանի բազմաթիվ ստեղծագործություններում, որտեղ ներառված են կարոտի, բաժանման, զարմանքի, ժպիտի պահերը. «Եվ երբ ներս մտավ ու տեսավ Բերյաշին գորգի վրա, զգաց, որ ինքը կոմս չէ... Բոգդանը զգաց, որ հիմա ահագին ճիգեր են հարկավոր, տղամարդկային բնավորության ոգորում՝ ստրուկ չդառնալու համար»[8]:

Խոսելով Բակունցի «Միրհավ» պատմվածքում պահի տևականության մասին՝ Ս.Աթաբեկյանը գրում է. «Հենց միայն պահի բովանդակությունն առանցքային նշանակություն է ստանում ողջ պատումի համար՝ գունավորելով և՛ սյուժեի առանձնահատուկ ընթացքը, և՛ հերոսի մտածումների ուղղվածությունը, և առհասարակ գրական երկի ներքին աշխարհը»[9]:

Ուշագրավ են նաև տարածաժամանակային սիմվոլների առատությունը Աղ. Այվազյանի ստեղծագործություններում: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Ժամացույցը ոչ միայն ժամանակն է խորհրդանշում, այլև՝ վախճանը, որը անխուսափելի է: «Աստված և ժամագործը» պատմվածքում չաշխատող ժամացույցի գանգը խորհրդանշում է ծերունի ամուսինների կյանքի ավարտը: Հեղինակն ընտրել է այս սիմվոլը՝ կյանքի վախճանի ժամանակը ցույց տալու: Մեկ այլ պատմվածքում («ժամագործների համքարությունը») ժամացույցը խորհրդանշում է ոչ միայն ճշգրիտ ժամանակը, այլ նաև անբացատրելիին, խորքը, այն հարցերը, որոնք միշտ հետաքրքրել են մարդուն:

Այվազյանի արձակում շարժուն նշաններից է *բիծը, կետը, գնդիկը, թնդուկը*: Այս սիմվոլները խորհրդանշում են ոչ միայն ժամանակը, այլև հերոսի ողջ կյանքը՝ որպես շատ մեծ իրողություն: Ստեղծագործության մեջ այս սիմվոլները շարժուն են, որովհետև շարունակում են նոր ձևեր ստանալ (մեծանալ,

---

[8] Նույն տեղում, էջ 41:
[9] Ս. Աթաբեկյան, Ակսել Բակունց. խոսքի... ու լռության պոեզիան, Եր., 2000, էջ 289:

ահագնանալ, պայթել և այլն): «Աղի կոմսում», օրինակ, բիծը օժտված է անսահման կարողությամբ: «Արմինուս» վիպակում թնջուկը խորհրդանշում է այն անբացատրելին ու անհասկանալին, որի բացահայտման համար գլխավոր հերոսը երկար ճանապարհ է անցնում:

Հեղինակի հայացքը հաճախ է վերցնում կենդանի, շարժուն *ժպիտի* գուներանգները տարբեր իրավիճակներում: Այս սիմվոլն առհասարակ իշխում է Այվազյանի արձակում: Այն կարող է հանդես գալ ցանկացած պահին՝ որպես խիղճ, ժամանակի խորհրդանիշ, սեր, կարոտ, կործանում, հայտնություն և այլն:

Հետաքրքիր բացատրություն ունի գրողը Մոնա Լիզայի ժպիտի մասին. «Գուցե քո ժպիտի մեջ է թաքնված դրա պատասխանը, իսկ քո ժպիտը ակնթարթի և հավիտենության շաղկապումն է... Ու որը որից երկար է՝ չես հասկանա... Նման ժպիտ միայն Աստված կարող էր դնել քո դեմքին՝ որպես պատասխան մեր բոլոր հարցերի»[10]:

Բազմաթիվ ստեղծագործությունների հիմքում դնելով ժամանակի՝ որպես կենդանի և անշարժ իրողության ներկայությունը՝ Աղ. Այվազյանը ստեղծում է գեղարվեստական մի այնպիսի միջավայր, որի մեջ ամփոփված ապրումների ուժը հարուստ կերպարների ներկայությամբ և մանրամասների զուգորդմամբ ապշեցնում է ոճի նրբագեղությամբ և ինքնատիպ եզրահանգումներով:

---

[10] Աղ. Այվազյան, Երկրի վրայի զբաղմունքը, Եր., 1993, էջ 118: